

կան անձանց իրաւանց սահմանները ճշտիւ որոշել և այն,

Մեր հասարակական կեանքի նոր արշալոյսը թէև բնաւ-
կանից աւելի կարմրութիւն ունի—արիւնանե՛րկ արշալոյս—
բայց և այնպէս այդ տխուր հանգամանքը թող մեզ չյունահա-
տեցնէ. բոլոր սրտով ու հոգով նուիրուենք գործին և աշխա-
տենք, որ յաջորդ սերունդները մեզնից աւելի լաւ օրեր տես-
նեն:

ԲՐԻՋ

Քառորդ դար է արդէն, որ հայ ազգը յետադիմում էր
Ռուսիայում, յետադիմում էր լեզուով, ազգային կեանքով և
ներքին ինքնուրոյնութեամբ, որին վտանգ էին սպառնում հպա-
տակ ազգերի երդուեալ թշնամինները—վերջին երկու տասնա-
մեակի երկրիս կառավարիչները: Սոցանից մանաւանդ իշխ. Գօս-
լիցինը և հանգ. Պէտքէն աշխատեցին մի մի ամուր պատնէշ
յօրինել սրածայր փշերով՝ հայ ազգի և ոուս կառավարութեան
միջն, որոնք ամբողջ հարիւր և աւելի տարիներ ապրել էին
միասին, անանջատ կեանքով, առանց խտիր դնելու իշխողի և
հպատակի միջն:

Վերջին երկու տարին մանաւանդ այդ հալածանքն հասաւ
իւր գագաթնակէտին և եղան ժամանակներն, երբ հայը Ռուսիա-
յում երկնչում էր իւր ազգութիւնը յայտնել, այն հայն, որ չէր
խնայել բազմից իւր արիւնը թափել Կովկասի նուաճման գոր-
ծում:

Սակայն հայ ազգը պատուով քամեց այդ դառնութեան-
բաժակը և ապացուցեց, որ չքաւորութեան և մուրացկանու-
թեան մէջ մեծ տարբերութիւն կայ, որ դոքա հումանիշ բա-
ռեր չեն:

Մենք միշտ այն համոզմունքն են ունեցել և արտայայտել
հրապարակով, որ դա անցողական մի բան է, որ չէ կարող Պ-
Բուրգի կառավարութիւնը մտածել այն եղանակով, ինչպէս որ
չափ ու ձև էին անում կառավարութեան անհեռատես գործա-
կանները, որ Ռուսիոյ մեծազօր թագակիրները Հայոց ազգի բա-
րօրութիւնը միշտ համարել են իրանց սրտին մօտ և հային
մերձաւոր բարեկամ մօտաւոր Ասիայում լոյս և քաղաքակրթու-
թիւն տարածելու:

Եւ մեր գուշակութիւններն իրականացան:

Այսօր Հայ ազգը կարող է նորից իւր սգաւոր երեսին
ժպիտ բերել. զնորհիւ Կովկասի նոր փոխարքայ Կոմս Վորօն-
ցով Դաշկօվի լուսամիտ առաջարկութեան Ն. Մ. Թագաւոր
Կայսը մի հրովարտակով տիրաբար պարգևեց Հայ ազգին իւր-

անկապտելի սեպհականութիւն՝ եկեղեցական դպրոցները ու բոլոր կալուածները. և մի հարուածով պատմական աւերակների կարգն անցկացրեց Պէվէլէնների և Գօլիցինների կառուցած պատմէշը. Այդ այն միակ միջոցն էր, որով Կովկասի հայերի սրտից արմատախիլ կարելի էր անել ամեն մի թշնամական զգացում դէպի ուսւ կառավարութիւնը: Յուսանք, որ այսուհետեւ մեր նոր կեանք առած դպրոցները, որպէս դալար ու քաղցրաբոյր պարտէզներ, նոր կեանք կտան մեր մատաղ սերնդին և մեզ համար նոր բացուող արշալոյսը կենսատու ցողերով կցողէ մեր բարոյական կեանքը:

Արքայական արդարադատ տնօրինութիւնն անհուն բերկրութեամբ լցրեց ինչպէս ամբողջ հայութեան, այնպէս էլ Ազգիս Վեհ. Գահակալի սիրտը, որ փութաց իւր ջերմ շնորհակալութիւնն արտայայտել առ Ն. Մեծութիւն Ամենայն Ռուսաց կայսրը հետևեալ հեռագրով.

«Պ. Բուրգ. Ն. Կ. Մ. Թագաւոր Կայսրին

Թո թագաւորութեան հասած մեծ փորձանքի ծանր տարում, որ վշտով է լցրել Թո սիրտը, Դու Թո արքայական գթութեան մէջ լիշեցիր Թեզ հաւատարիմ Հայ ազգը և Թո վստահութեան հետ միասին վերադարձրիր լուսաւորութեան լայն գործունէութեան բոլոր միջոցները: Մեծ է իմ ամբողջ հօտի երախտագիտական ցնծութիւնը թէ պետութեան սահմաններում և թէ աշխարհի միւս մասերում: Խորին զգացուածութեամբ է լցւում և Թո ջերմեռանդ ազօթարարի սիրտը, որ ապրեց, մինչև որ կատարուեց իւր անշեղ հաւատը դէպի Թո արդարադատութիւնը և մարդասէր իմաստութիւնը: Այսօր, առաջին կիւրակի օրը Թո կամքը յայտնելուց յետոյ, Թիֆլիսի Մայր եկեղեցում, տեղական ամբողջ հոգևորականութեան պաշտօնավարութեամբ, իմ ամբողջ հօտիս հետ աղօթեցի Թո և Թո Օգոստափառ ընտանիքի առողջութեան և երկարակեցութեան համար:

Զերս էլ մեր աղօթքը: Թող ամենակալը ուղարկէ Թո սըրտին միխթարութիւն և ուրախութիւն՝ արտաքին խաղաղութեան և ներքին անդորրութեան շուտափոյթ հաստատութեան համար, յերջանկութիւն Թո համայն ժողովրդի:

ՄԿՐՏԻՉ I կաթողիկոս ամենայն Հայոց»

Նորին Մեծութիւնը հետևեալ հեռագրական պատասխանը ուղղեց Վեհ. Հայրապետին.

«Թիֆլիս, Ամենայն Հայոց Կաթողիկոսին

«Անկեղծօրէն շնորհակալութիւն եմ յայտնում Ձեր
Սրբութեան արտայայտած դդացումների համար։ Թող
Տէրը իմաստնայնէ Հայկական հօտը՝ արդարացնելու
իմ նորան ցոյց տուած վատահութիւնը»։

Ծնորհակալութեան հեռագիրներ ուղղուեցան և Կովկասի
կոմս Փոխարքային կիսլաւօդսկ Նորին Վեհափառութեան և
Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից։

Աւետարեր հրովարտակի լուրն առնելուն պէս, Վեհ. կա-
թողիկոսը պարագ համարեց անմիջապէս աւեստել Խուսիայի և
արտասահմանի ազգիս բոլոր հոգենորական և աշխարհական
անդամներին կայսերական այդ շնորհը, պատուիրելով ամե-
նուրեք գոհացողական մաղթանքներ կատարել, նոյնը ինքը ծե-
րունազարդ Հայրապետը կատարելով Վանքի աւագ եկեղեցու
բակում բոլոր հոգենորականութեան մասնացութեամբ և տաս-
նեակ հազարաւոր ժողովրդի ներկայութեամբ։

Բարձրագոյն հրովարտակը վերջնական կերպով չէ որո-
շում հայոց նոր բացուող դպրոցների կանոնները, այլ յանձ-
նում է Կովկասեան Փոխարքային անյապաղ առաջարկութիւն
անել սահմանուած եղանակով նոր կանոնազրութիւն հրատա-
րակելու համար, բայց որպէս զի այս հանգամանքը արգելք
չինի այժմէն իսկ դպրոցներ բանալու, Փոխարքան հրատարա-
կեց հետեւեալ ժամանակաւոր կանոնները թէ գոյքերի կառավա-
ռութեան և թէ նոր բանալի դպրոցների համար։

Ա. Եկեղեցներին պատկանող գոյքերի վերաբերմամբ,

1) Հայադաւան եկեղեցիների գոյքերի կառավարութիւնը
յանձնւում է ծխական հոգաբարձութիւններին, բաղկացած
երէցփոխից և անդամներից թուով 2—4, հաւասար իրաւունք-
ներով, որոնց ընտրում են ծխականները իրենց միջից 3 տա-
րով։

2) Ծխական հոգաբարձութիւնների անդամների ընտրու-
թիւնը կատարելու է ծխականների ընդհանուր ժողովներում
ներկայ եղողների ձայների մեծամանութեամբ և հաստատում
է թեմական առաջնորդից։

3) Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրա-
ւունք ունին ծխին պատկանող արական սեռի 25 տարի հասակ

ունեցող բոլոր անձերը, որոնք օրինական իրաւունք են վայելում հասարակական պաշտօններ կատարելու և եկեղեցու ծխականներ են հաշում ոչ պակաս քան 2 տարի:

4) Ծխական հոգաբարձուների վրայ պարտականութիւն է դրւում հոգ տանելու պատշաճաւոր թոյլտութեամբ հիմնելու դպրոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ:

5) Եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու չը լինին ծխերի բոլոր կարիքները հոգալու, առաջադրութիւն է անուում ծխականներից որոշ տուրք նշանակելու վերաբերմամբ. այդ տուրքը կարող է լինել միանուագ կամ մշտական, դրամով կամ իրերով; Այդ առաջադրութիւնն առաջարկում է ծխականների ընդհանուր ժողովի ընսութեան և նրա կողմից ընդունուելուց և այդ մասին վճիռ կայացնելուց յետոյ պարտադիր է դառնուում համաձայնութիւն յայտնողների համար:

6) Խրաբանչիւր տարուայ եկամուտի նախահաշիւը՝ կազմուած հոգաբարձութեան կողմից ստանում է ծխականների ընդհանուր ժողովի հաւանութիւնը և հաստատում է թեմական առաջնորդից:

7) Ծխական հոգաբարձութիւնները պարտաւոր են հաշիւտալ թէ վիճակաւոր առաջնորդին և թէ ծխականների ընդհանուր ժողովներին, որոնք իրաքանչիւր տարի ընտրում են առանձին վերաստուգող լանձնաժողովներ հաշիւները ստուգելու համար:

Բ. Հոգմար գպրոցներին պատկանող կալուածների մասին:

1) Հոգմոր գպրոցների կալուածները (Օր. ժող. XI հ. հրատ. 1886 թ. յօդ. 1266) կառավարում են առանձին հոգաբարձական խորհուրդներ՝ բաղկացած 12 հոգուց, նախագահութեամբ թեմական առաջնորդի:

2) Հոգաբարձական անդամներ ընտրելու համար թեմական առաջնորդի կամ նրա կողմից նշանակուած անձի նախագահութեամբ, հրաւիրուում է վիճակային ընտրովների ժողով երկու-երկու հոգի այն քաղաքի եկեղեցիներից, ուր գտնուում է դպրոցը. այդ անձերն ընտրուում են ծխականների ընդհանուր ժողովով ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և միմի ընտրող իրաքանչիւր գործակալութիւնից ընտրուած գիւղական եկեղեցիների ներկայացուցիչների ժողովով: Հոգաբարձական խորհրդի անդամներն ընտրուում են 4 տարով:

3) Հոգաբարձական խորհրդի անդամները հաստատում են իրենց պաշտօնում Ամենայն հայոց Կաթողիկոսի կողմից:

4) Հոգաբարձական խորհրդի անդամների կէսը շարուց յետոյ զուրս է գալիս պաշտօնից և առաջին անգամ վիճակով:

5) Վիճակային ընտրողների ժողովը, հոգաբարձական խորհրդի լիազօրութեան ժամանակամիջոցում, ընտրում է վերաստուգող յանձնաժողով, որի եղակացութիւնը հաղորդում է էջմիածինի Սինօդին:

6) Տարեկան նախահաշիւները, ինչպէս նաև հոգաբարձական խորհրդների հաշիւները, հաստատում են էջմիածնի Սինօդից:

Դ. Վանքապական գոյքերի կառավարութեան մասին:

1) Վանքապատկան գոյքերի կառավարութիւնը յանձնւում է վանական իշխանութեան:

2) Վանքապատկան գոյքերի կառավարութեան կանոնաւորութեան վրայ հակելու համար կարող են հրաւիրուել թեմական առաջնորդի կողմից և աշխարհական անձեր՝ օգնելու վանքական իշխանութեան:

ԱՐԻՒՆԱԾԻՑ ՕՐԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Դարձեալ արիւն, կրակ և աւելածութիւն...

Փետրուարեան դժբախտ օրերից յետոյ, ըստ երեսյթին ուժերը ժողովելու և մի նոր, աւելի խոշոր ձեռնարկութիւն սկսելու համար, թուրքերը լոել էին և խուլ կերպով պատրաստութիւններ տեսնում:

Ոչ միայն սենատոր Կուզմինսկին գիտէր, գուշակում էր լինելիքը և լոեց, այլև մինչև իսկ տեղական իշխանութիւնները ստացան զգուշութեան ազդարարութիւն և հնար չունեցան արիւնհեղութեան դէմն առնել: Հնարք չունեցման, չը կարողացման կամ չը կամեցան—այդ գեռ հարց է՝ բաւական մութ, բաւական հետաքրքրութեան արժանի: Խնդիրն այն է, որ Կովկասի ամենանշանաւոր, գործարանական ամենաբազմամարդ քաղաքը պատերազմի դաշտի փոխուեց և... իշխանութիւնները մնացին շուարած, յանկարծակիր եկած:

Սակայն, պէտք է ճշմարիտ լինել, թուրքերը չէին կամենում այդքան շուտ սկսել. ամեն ինչ պատրաստ չէր նրանցում՝ կանաչ դրօշը բարձրացնելու: Դէպէերը վրայ հասան և արագացրին գործը:

Փետրուարեան օրերից յետոյ մի արտասովոր յանդանութիւն էր երեան եկել Բագուի թուրք հասարակութեան մէջ՝ յանդանութիւն, որ ապշեցնում էր նոյն իսկ ոռւսներին: Օդի-